ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

9 հոկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

137
(2987)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՄԱՄՆԱՎՈՐ ԾՆՆԴԱՏՈՒՆ Է ԲԱՑՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆԸ ՓԱԿԵԼՈՒ ԳՆՈՎ

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող «Քանաքեռ-Զեյթուն ծննդատունը», որը հիմնադրվել է 1950-ական թվականներին եւ գործում է առ այսօր, կարող է փակվել, եւ շուրջ 60 աշխատակից մնալու է անգործ:

Առաջին հայացքից թվում է, թե մերօրյա Հայաստանում նոր բան չէ գործող բժշկական կենտրոն փակելը՝առանց հիմնարար վերլուծությունների եւ տեսլականի՝պարզաբանելով, թե՝«բժշկական ծառայությունների հասանելիության, որակի, մատչելիության նպատակով է արվում»: Նմանօրինակ աղմուկ էլ Գավառի բժշկական կենտրոնի շուրջ էր ծավալվել, որին «Ժողովուրդ» օրաթերթը օրերս անդրադարձել էր: Ամեն ինչ այդքան պարզունակ չէ, եւ երբ ավելի հանգամանորեն ենք ուսումնասիրում եղելությունը, նկատում ենք «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի փակման եւ պատճառները եւ շարժառիթները:

Երեւանի քաղաքապետարանը վերջերս իրականացրած ԲԿ-ների, պոլիկլինիկաների օպտիմալացման ծրագրի մեջ հատկապես «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ն որեւէ հիմնարկի հետ չի միավորել, ընդհակառակը՝ գործող ծառայությունը որոշվել է լուծարել՝ փակել: Ավելի հասկանալի կլիներ, եթե Երեւան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-ի ««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու եւ «Լեւոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» ՓԲԸ-ին միացման ձեւով վերակազմակերպելու մասին» հ.651-Ա որոշման մեջ ներառված լիներ նաեւ «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ն, եւ եթե հիշենք, որ ծննդատան տեղակայումը շատ մոտ է, եւ ոչ վաղ անցյալում «Քանաքեռ-Զեյթուն» ԲԿ-ի հետ 8-րդ հիվանդանոցի կազմում է եղել, ապա ծննդատունը փակելը անտրամաբանական է: Իհարկե, այս ամենին եւս կա բացատրություն. «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ մինչեւ 2023 թվականը «Ուիգմոր կանանց եւ երեխաների հիվանդանոց»-ի բացումը տեւական ժամանակ քննարկվում էր. առողջապահական հանրությունը խոսում էր նոր, իր նմանը չունեցող, միջազգային ստանդարտներով մոր եւ մանկան առողջության ծառայությունների կենտրոնի բացման մասին, եւ, բնականաբար, սեփականատերերը նախապատրաստվում էին բոլոր ուղղություններով: «Ուիգմորի» մուտքը առողջապահական համակարգ պետք է լիներ անխոչընդոտ, սակայն այս հիվանդանոցին աննախադեպ շատ՝600 մլն դրամի պետական պատվերի տրամադրումը առողջապահության նախարարության կողմից, որը իրականացվել է այլ կլինիկաների գումարները իջեցնելու հաշվին, աննկատ չմնաց ո՛չ լրատվամիջոցների, ո՛չ էլ իրավապահ մարմինների կողմից: Նախնական պլանները ամբողջությամբ չստացվեցին, եւ հենց այդ պատճառով ծննդօգնության համար առողջապահության նախարարը մշակեց այլ մարտավարություն: Որոշեց ռիսկի չգնալ եւ 2023 թվականին իր սիրելի «Ուիգմորին» ծննդօգնության պետական պատվեր չտրամադրել: Բայց դա մեր երկրի որդեգրած մարտավարությանն է հակասում, քանի որ, ստացվում է, որ առաջին անգամ ՀՀ-ում ծավալվում են ծննդօգնության վճարովի ծառայություններ, բայց մենք խթանում ենք անվճար ծննդօգնության ծրագիրը:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

Հայաստանում գործում է «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազման եւ կանխարգելման մասին» ՀՀ օրենքը, որը ենթադրում է, որ պետք է ԵԱՏՄ անդամ պետություններում, այդ թվում՝ ՀՀ-ում եւս, ծխախոտները լինեն միանման փաթեթավորմամբ, պարունակեն մարդու առողջությունը վտանգող ահասարսուռ տեսարաններով նկարներ՝ դրանով նպաստելով ծխախոտի օգտագործման դեմ պայքարին: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրել է, որ մեր երկրում շարունակվում են (իհարկե փակ ստենդներից) վաճառվել «ոչ սարսափելի տեսարաններով», գեղեցիկ դիզայնով ծխախոտի տարբեր արտադրանքներ: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը հարցում ուղարկեց ՀՀ առողջապահության նախարարություն՝հետաքրքրվելով՝ ա) հետեւողական եղե՞լ եք արդյոք կառավարության առաջարկով Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի կիրառման արդյունքներին: Օրինակ՝տնտեսվարողների քանի՞ տոկոսն է ծխախոտը վաճառում նշված կանոնակարգին համապատասխան, բ) օրենքի կիրառման քանի՞ խախտում է արձանագրվել, գ) ի՞նչ ընթացք են ունեցել բացահայտված դեպքերը, դ) կա՞ն հստակ անձինք, որոնք ենթարկվել են պատասխանատվության՝օրենքի խախտման համար: Այս հարցերին ՀՀ առողջապահության նախարարությունից 4 էջ պատասխան են գրել՝ տեղեկացնելով, որ գլխավոր քարտուղարի տեղակալ Արմինե Ավոյանը 2023 թվականի հունիսին, ՀՀ ԱՆ նախաձեռնությամբ, ԵԱՏՄ անդամ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում է ծավալել՝միատեսակ փաթեթավորման ներդրման վերաբերյալ, սակայն Ղազախստանն ու Ղրղզստանը դեռ դիրքորոշում չեն հայտնել, իսկ ՌԴ-ն եւ Բելառուսը հայտնել են, որ այս պահին նպատակահարմար չէ միատեսակ փաթեթավորման կիրառումը, ու քանի որ կոնսենսուս չկա, հարցը դեռ չի լուծվել: Մյուս հարցերի մասով առողջապահության նախարարությունը պատասխանատու չէ: Ստացվում է, որ առողջապահության ոլորտի թիվ մեկ կազմակերպիչ Անահիտ Ավանեսյանը, որ հաճախ է խոսում ծխախոտի դեմ պայքարի մասին, մեր երկրում ընդունված օրենքի կիրառման բացակայությունը կապում է ՌԴ-ի, Բելառուսի կամ այլ պետությունների հետ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում նոր կռվի թիրախ է հայտնվել: «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ ՔՊ-ականները կուլիսային խոսակցություններում դժգոհում են, թե վերջին շրջանում Նիկոլ Փաշինյանը մեծ տեղ է տալիս ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին, որը, փաստացի, թանգարաններում կամ մշակութային այլ վայրերում լուրջ դեմքով շրջելուց եւ Փաշինյանի ուղարկած փաստաթղթերը դակելուց զատ՝որեւէ այլ գործառույթ չի կատարում: ՔՊ-ականներին զայրացրել է Փաշինյանի եւ Վահագն Խաչատուրյանի այս մտերմությունը: Ինչպես իշխանականներն են վրդովված պատմում մասնավոր զրույցներում՝Նիկոլ Փաշինյանը ոչ հրապարակային, առանձին հանդիպումներ է ունենում նախագահի հետ, նրա հետ կարեւոր հարցեր քննարկում, հաճախ նաեւ խորհրդատվության համար է դիմում Խաչատուրյանին, սակայն իր հարազատ խմբակցությանը վերաբերվում է որպես հավաքական անկարողների: Կարճ ասած՝ ակնհայտ ցույց է տալիս թիմակիցներին, որ որքան էլ դժգոհեն Խաչատուրյանից, միեւնույնն է՝ չի հեռացնելու նրան:

***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Նիկոլ Փաշինյանի վրա խնձոր նետելու քրեական գործը քննելու է Երեւան քաղաքի դատավոր Արման Հովհաննիսյանը: Դատավոր Հովհաննիսյանը դատական համակարգում աչքի է ընկել իր օբյեկտիվ որոշումներով ու մշտապես, առանց կաշկանդվելու, բարձրաձայնել է դատական համակարգում տիրող իրավիճակը: Ավելին՝ԲԴԽ-ի թեթեւ ձեռքով արդեն երկրորդ անգամ դատավոր Արման Հովհաննիսյանի անունը հեռացվում է վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից: Նրան հեռացնելով՝ քաղաքական իշխանությունների իրենց ցանկալի դատավորին են առաջ տանում. խոսքը, օրինակ, Հրայր Թովմասյանի գործը քննող դատավոր Տաթեւիկ Գրիգորյանի մասին է: Հիշեցնենք, որ խնձոր նետելու հայտնի դեպքով ձերբակալվել էր 71-ամյա արցախցի Ալբերտ Առստամյանը: Ալբերտ պապիկի բնակության վայրը մանկահասակ երեխաների ներկայությամբ ենթարկվել էր խուզարկության՝ խնձոր գտնելու նպատակով: Արդյունքում, Փաշինյանի ուղղությամբ խնձոր նետելու դեպքով Ալբերտ Առստամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարելու համար. նրա նկատմամբ ընտրվել է «բացակայելու արգելք» խափանման միջոցը:

ԶՐՈՒՅՑ

# ՀԱՄԱՐՈՒՄ Է՝ ՇԱՐԺՈՒՄԸ ՎԱՂՈՒՑ Է ՄԱՐԵԼ

**«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խաղաքական գործիչ, «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանը, արձագանքելով իր հասցեին հնչած մեղադրանքներին, թե իր քայլերի պատճառով է Սրբազան պայքարը մարում, նշել է. «Շարժումը դեռեւս մայիսի 9-ից հետո է մարել», եւ պնդում է, որ այդ ամենը եղել է խորհրդարանական ընդդիմության պատճառով:**

Ըստ Սուրեն Պետրոսյանի՝խորհրդարանական ընդդիմությունն անում է ամեն բան, որպեսզի Հայաստանում իշխանափոխություն չլինի:

**-Պարոն Պետրոսյան, մինչ օրս շատ է քննարկվում «Տավուշը հանուն հայրենիքի» ընդդիմադիր շարժումից Ձեր տարանջատվելը: Թե՛ շարժման անդամներն են մեղադրանքներ հնչեցնում, թե՛ Դուք եք նրանց մեղադրում: Ձեր հասցեին ուղղված հիմնական մեղադրանքն այն է, որ շարժումը լքելը իշխանությանը առիթ տվեց բարձրաձայնելու, թե նույնիսկ շարժման ներսում համախմբում չի եղել: Ինչպե՞ս կարձագանքեք այս մեղադրանքներին: Խոսքը հատկապես վերաբերում է նախկին նախագահների ներկայության մասին պնդումներին ու այդ երեւույթին Ձեր արձագանքին:**

-Ես բազմաթիվ անգամ եմ արձագանքել, գիտեք՝ ամենակարեւորը որն է, որ այդ տարանջատումը եղել է ոչ թե հունիսի 12-ից, կամ շարժման որեւէ այլ փուլում, այլ եղել է 2021 թվականից, 2020 թվականից: Այնքան ժամանակ, ինչքան որ զբաղվում եմ քաղաքական գործունեությամբ, իմ խոսույթում միշտ եղել է դա: Այս ողջ ընթացքում իմ մոտեցումը երբեք չի փոխվել: Ես սրա մասին բազմիցս ասել եմ: Մարդիկ հաճախ ասում են՝ «Գիտեիք, որ այս մարդիկ ներգրավված են, ինչո՞ւ ձայն չէիք հանում»:

Ես շատ եմ կրկնել, որ պայմանավորվածությունը եղել է հետեւյալը, որ բոլորը կարող են մասնակցել, քանի որ սա համազգային շարժում է, սակայն որեւէ մեկը որոշումների ընդունման հարցում չի կարող շարժման վրա ազդեցություն ունենալ: Որպես պլատֆորմ՝ որեւէ մեկը չի կարող դերակատարում ունենալ, իսկ մասնակից կարող են եւ պարտավոր են լինել բոլորը: Այս շեղումները ընթացքում են ի հայտ եկել: Ինձ հաճախ մեղադրում են, որ ավելի շուտ չեմ խոսել այս մասին, սակայն եթե ես մայիսի կեսին դա անեի, երբ շարժումն իր բարձրակետին էր, ապա քանդվելու էր ամեն բան, հետեւաբար, ձայն չեմ հանել: Բացի այդ, պառլամենտական ընդդիմության կողմից եղել է նախապես ծրագրված սցենար: Փակ հանդիպումների ժամանակ այնպիսի ինտրիգներ էին լինում, որ ինձ դրդեին նրան, որ հաջորդ օրը հայտարարեի՝ շարժմանը չեմ մասնակցում:

**-Հանդիպումները Բագրատ սրբազանի ներկայությամբ են եղել:**

-Տարբեր ձեւաչափերով են եղել: Եվ այդ իրավիճակների նպատակը դուրս գալու մասին իմ հայտարարությունն էր: Դրանով լուծվում էր երկու խնդիր. առաջին՝ շարժումը անպայման կտապալվեր՝ վերադառնալով նախկին ստատուս քվոյին, որտեղ խորհրդարանական ընդդիմությունը ունի որոշակի կենսունակություն: Այդպիսով, քավության նոխազը կդառնայի ես, եւ այդ սցենարը չստացվեց մինչեւ հունիսի 12-ը, երբ շարժում, որպես այդպիսին, արդեն չկար:

Շարժման տապալումը ինձնով պայմանավորող մարդիկ ինչո՞ւ չեն մտածում, թե ինչու մայիսի 9-ին ժողովուրդը գնաց տուն: Մայիսի 9-ին բոլորը սարսափած էին, քանի որ իշխանափոխությունից մեկ էր պակաս: Եվ հետաքրքիրն այն է, որ ավելի շատ սարսափած էր խորհրդարանական ընդդիմությունը, քան իշխանությունը, քանի որ չէր պատկերացնում, թե նոր ձեւավորվող գործընթացի մեջ իրենց տեղն ու դերը ինչ է լինելու: Իշխանությունը գոնե գիտեր նման դեպքում ինչ էր անելու, մի մասը հեռանալու էր երկրից եւ այլն, իսկ ընդդիմությունը չգիտեր, թե ինչ է անելու: Հենց այս ամենի համար էլ ցանկացել են օգտագործել իմ կոմպոնենտը:

Եվ երկրորդ՝ իրենք կչեզոքացնեին մեկին, ով իրենց վերահսկողությունից դուրս էր բոլոր առումներով:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

## ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 228

2018 թվականի հուլիսի 10-ին ՀՀ կառավարությունում անցկացված խորհրդակցության ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Մեր կառավարության օրոք կասկածելի որակով ճանապարհ չպետք է կառուցվի»:

Սակայն, իրականում, Հայաստանում թեեւ ճանապարհների ասֆալտապատման մեծ ծրագրեր են իրականացվում, բայց այդ ասֆալտը շատ արագ շարքից դուրս է գալիս: Անգամ վերակառուցված ճանապարհները վերակառուցումից ամիսներ անց դառնում են ոչ պիտանի:

Մասնավորապես, 2020 թվականի պատերազմից հետո Գորիս-Կապան մայրուղին թշնամուն հանձնվեց, եւ վարորդներին հատկացրին Տաթեւ-Աղվանի վերանորոգված շրջանցիկ ճանապարհը: Սակայն այն չդիմացավ անգամ կես տարի: 11.08.2022թ. կառավարությունը լրացուցիչ գումար հատկացրեց Սյունիքի Գորիս-Կապան ճանապարհի այլընտրանքային Տաթեւ-Աղվանի ճանապարհի վերակառուցման համար: Նիկոլ Փաշինյանն արդարացավ, թե՝ ճանապարհը նախատեսված չէր բեռնատարների համար, միջհամայնքային ճանապարհ էր, եւ այլն:

26.07.2023թ. խորհրդարանում քննարկման ժամանակ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Ղահրամանյանը տարածքային կառավարման նախարար Գնել Սանոսյանին դիմելով՝ ասաց. «Անկեղծ՝ կապված վերջին երեք տարիներ հետ, երբ ես հետեւում եմ ասֆալտապատմանը Հայաստանում, եկել եմ այն եզրահանգման, որ պետությունն ուղղակի ավել փող ունի, ուղղակի փող է ծախսում՝ աշխատանք ապահովելու, չգիտեմ՝ աշխատանք ցույց տալու: Փակ քննարկում է, մենք մերոնցով ենք, ասեմ էլի, որովհետեւ ամենաուշը երկու ամիս հետո ասֆալտը գոյություն չունի»:

ՔՊ-ական պատգամավոր Բաբկեն Թունյանն ընդհատեց՝ հուշելով, որ իրենք իրենցով չեն, ուղիղ եթեր է: Նարեկ Ղահրամանյանը զարմացած հարցրեց՝ «ուղիղ եթե՞ր է»: Թունյանը ասաց, որ լրագրողները լուսաբանում են, եւ անհարմար բացահայտում ստացվեց:

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԱԺ՝ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը, որին սեպտեմբերի վերջին հավանություն է տվել Սահմանադրական դատարանը, ուղարկվել է Ազգային ժողով՝ վավերացման:

Ավելի վաղ հայտարարվել էր, որ այդ քննարկումների ընթացքում կառավարության ներկայացուցիչը փոխվարչապետ, սահմանազատման հայկական հանձնաժողովի նախագահ Միհր Գրիգորյանը կլինի:

Կանոնակարգը սահմանված ժամկետից երկու ամիս ուշ ստորագրվեց, տեքստը հրապարակվեց դրանից միայն երկու օր հետո: Գործադիրը պարզաբանեց, թե բովանդակության գաղտնազերծման ուշացումը կապված է նաեւ Ադրբեջանի հետ գործընթացը հնարավորինս սինխրոնացնելու անհրաժեշտության հետ:

Ըստ այս փաստաթղթի՝Երեւանն ու Բաքուն համաձայնել են սահմանազատումն իրականացնել 1991 թվականի՝ Ալմաթիի հռչակագրի վրա, բայց այդ համաձայնությունը վերջնական չէ: Կանոնակարգում նշվում է՝ գործընթացը հնարավոր է հետագայում՝ խաղաղության համաձայնագրի ընդունումից հետո, այլ սկզբունքներով ընթանա:

Կանոնակարգը 7 հոդված ունի, հիմնականում գործընթացին վերաբերող տեխնիկական տվյալներ են, ընդհանրական ձեւակերպումներ:

Նշենք, որ Ադրբեջանում կանոնակարգի տեքստը չի հրապարակվել եւ այն որեւէ ընթացակարգ դեռ չի անցել:

ԱԺ-ում այս հարցով զեկուցող է նշանակվել ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը:

Հիշեցնենք, որ կանոնակարգը ստորագրվել է օգոստոսի 30-ին, իսկ ՍԴ-ն սեպտեմբերի 26-ի որոշմամբ հաստատել էր, որ այն համապատասխանում է ՀՀ սահմանադրությանը:

## ԵՌԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բաքվի ու Երեւանի միջեւ հակամարտության կարգավորման հարցում Մոսկվան հենվում է այն փաստի վրա, որ դրա համար հիմք են Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված եռակողմ համաձայնագրերը:

Ինչպես փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն, այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովը

«Մենք ելնում ենք նրանից, որ այս բոլոր բարդ հարցերի համապարփակ կարգավորման հիմքը Ադրբեջանի, Հայաստանի եւ Ռուսաստանի հայտնի եռակողմ պայմանավորվածությունների իրականացումն է»,- ասել է Ուշակովը՝ մեկնաբանելով Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցերը եւ Ռուսաստանի դրական դերը Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործում:

## ՌԴ–Ն ՉԻ ՈՂՋՈՒՆՈՒՄ ՀՀ–ՈՒՄ ԵՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բաքվի եւ Երեւանի միջեւ բանակցային գործընթացի ոչ բոլոր մասնակիցներն են, որ ողջունում են Հայաստանում ԵՄ առաքելության ընդլայնման փաստը: Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովը:

«Հայաստանում ԵՄ առաքելության գործունեությունը չի ողջունվում: Ափսոսանքով պիտի նշեմ, որ այդ առաքելությունը ընդլայնվում է: Հունիսին դրա կազմում 138 հոգի կար, այժմ՝ մոտ 210: Եվ նախատեսվում է, որ առաքելության կազմը պետք է հասցվի 600-ի: Թե ինչով են նրանք այնտեղ զբաղված, կարելի է, իհարկե, պատկերացնել»,- ասել է Ուշակովը:

## ԿՐԵՄԼՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՊՈՒՏԻՆԸ ԵՎ ՓԱՇԻՆՅԱՆԸ

Մոսկվայում կայացել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան հանդիպումը:

ՌԴ նախագահը նշել է, որ Ռուսաստանը Հայաստանի տնտեսության առաջատար ներդրողն է:

«Առեւտրատնտեսական հարաբերությունները զարգանում են շատ հաջող, ապրանքաշրջանառությունը նախորդ տարի հասել է 7,4 միլիարդ դոլարի, իսկ առաջին կիսամյակում աճել է 2,5 անգամ՝ գերազանցելով 8,3 միլիարդ դոլարը: Եթե մենք շարժվենք այս տեմպերով, նշանակում է, որ մինչեւ տարեվերջ այն կկազմի 14-16 միլիարդ, սա ռեկորդային ցուցանիշ է», - ասել է Պուտինը:

Բացի այդ, ՌԴ նախագահը Փաշինյանին հրավիրել է մասնակցելու Կազանում ԲՐԻԿՍ գագաթնաժողովին:

Նախքան այս՝ Պուտինը հանդիպել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

# ԻՐԱՎԻՃԱԿ

## «ԻՐԱՆԸ ԱՄՆ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԹՇՆԱՄԻՆ Է». Ք. ՀԱՐՐԻՍ

ԱՄՆ փոխնախագահ եւ նախագահի թեկնածու Քամալա Հարրիսը Թեհրանը համարում է Վաշինգտոնի գլխավոր թշնամին եւ ձգտում է թույլ չտալ Իրանին միջուկային զենք ձեռք բերել: Այդ մասին նա հայտարարել է CBS-ին տված հարցազրույցում:

Հարցին, թե որ երկիրն է նա համարում Միացյալ Նահանգների գլխավոր հակառակորդը, Հարրիսն ասել է.

«Կարծում եմ՝ ակնհայտ է. դա Իրանն է, Իրանի ձեռքերին ամերիկացիների արյուն կա»:

Հարցին, թե արդյոք ինքը ռազմական գործողություններ կձեռնարկի, եթե Իրանը միջուկային զենք ստեղծի, Հարրիսը պատասխանել է.

«Ես հիմա չեմ պատրաստվում հիպոթետիկ հարցերի մասին խոսել»:

## «ՀԸԶԲՈԼԼԱՀ»-Ի ԱՎԵԼԻ ՔԱՆ 120 ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՆ ՀԱՐՎԱԾԵԼ

Իսրայելական ռազմաօդային ուժերի ինքնաթիռները մեկ ժամվա ընթացքում հարվածներ են հասցրել «Հըզբոլլահ»-ի՝ Լիբանանի հարավում գտնվող ավելի քան 120 օբյեկտների: Այս մասին նշված է Իսրայելի ռազմաօդային ուժերի X-ի միկրոբլոգում տարածած հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ հարվածների թիրախում են եղել «Ռադվան» հատուկ նշանակության ջոկատի, հրթիռային ուժերի, հետախուզական վարչության օբյեկտները:

Ըստ հաղորդագրության՝ գործողությունը շարունակությունն է մի շարք հարվածների, որոնց նպատակն է թուլացնել «Հըզբոլլահ»-ի հրամանատարական, վերահսկման եւ կրակային կարողությունները եւ օգնել իսրայելական ցամաքային ուժերին՝ հասնելու իրենց օպերատիվ նպատակներին:

## ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ու Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց են ունեցել: Շնորհավորելով Պուտինին ծննդյան օրվա առթիվ՝ Էրդողանը նշել է, որ երկրների միջեւ հարաբերությունները շարունակում են զարգանալ եւ ամրապնդվել:

«Թուրքիայի նախագահ Թայիփ Էրդողանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերությունները, տարածաշրջանային եւ գլոբալ հարցեր: Էրդողանը գոհունակություն է հայտնել, որ Թուրքիայի եւ Ռուսաստանի հարաբերություններն ամրապնդվում եւ զարգանում են: Նա նշել է, որ բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը կշարունակվի, եւ առաջնորդները առաջիկա ժամանակահատվածում կշարունակեն մանրամասն քննարկել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ խնդիրները՝ օգտագործելով տարբեր հնարավորություններ: Զրույցի ընթացքում նախագահ Էրդողանը շնորհավորել է նաեւ Ռուսաստանի նախագահ Պուտինին ծննդյան օրվա առթիվ», - ասվում է Էրդողանի գրասենյակի հաղորդագրության մեջ:

ՎԱՀԱՆ ԲԱԴԱՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

## «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՐԱՑՈՂԸ ՄԻԱՅՆ ՑԱՎ Է ՍՏԱՆՈՒՄ»

**Հայաստանում այս պահին ստեղծվել է մի իրավիճակ, երբ քաղաքական անցուդարձը բավական լարված է: Իշխանությունը ցանկանում է խուսափել խնդրահարույց ծրագրերից եւ կենտրոնանալ 2026 թվականին սպասվող հերթական ընտրությունների վրա, ինչի համար էլ ամեն կերպ աշխատանք է տանում հասարակության շրջանում իրենց իմիջը բարձրացնելու նպատակով: Ընդդիմությունն էլ իր հերթին տարբեր հանդիպումների եւ քննարկումների ընթացքում բարձրաձայնում է երկրում առկա խնդիրները, միանում Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի առաջնորդած Սրբազան պայքարին:**

Այս ամենի հետ մեկտեղ արդեն մեկ տարի է անցել Արցախի հայաթափումից եւ ավելի քան 120 հազար արցախցիների բռնի տեղահանումից, սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում բնակություն հաստատած բազմաթիվ արցախցիներ շարունակում են բախվել կենցաղային, փաստաթղթային եւ բազմաթիվ այլ խնդիրների:

Այս եւ այլ թեմաներով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի ԱԺ նախկին պատգամավոր Վահան Բադասյանի հետ՝ իր առաջիկա անելիքների, Բագրատ սրբազանի հետ պայքարի եւ իր անձնական խնդիրների մասին:

Խոսելով իր զբաղմունքի եւ առաջիկա ծրագրերի մասին՝ Վահան Բադասյանը նշեց. «Ապրում եմ այնպես, ինչպես բոլոր տուն չունեցող արցախցիները: Եթե տարեկան մի քանի տեխնիկա պակաս գնեի, Երեւանում տուն կունենայի, սակայն չեմ զղջում: Այն ժամանակ Երեւանում տուն ունենալը դիտվում էր որպես պահեստային հնարավորություն՝Արցախը թողնելու դեպքում: Ես այդպես չէի մտածում եւ ճիշտ էլ անում էի: Եթե նորից հնարավորություն ունենայի, ապա կրկին նույնը կանեի»:

Նա հավելեց, որ Երեւանում ունեցած իր տունը 2004 թվականին վաճառել է եւ գումարն ավելացրել իր ունեցած գումարին՝ ալրաղաց գնելու եւ Արցախ տանելու համար: Այս պահին Վահան Բադասյանը իր 8 հոգանոց ընտանիքով ապրում է վարձով բնակարանում, որի համար նաեւ պետությունից գումար են ստանում. նախատեսված է՝ անձը 50 հազարական դրամ: Այս պահին Արցախի ԱԺ նախկին պատգամավորը չի աշխատում, փորձերն ապարդյուն են անցել. «Պաշտոն չեմ փնտրում, գործարարության փորձ ունեմ եւ փորձում եմ այդ տիրույթում աշխատել կրկին»:

Խոսելով դժվարությունների մասին՝Վահան Բադասյանը նշել է, որ ինքն ու իր սերունդները ապրելու են Հայաստանում եւ արտագաղթի մասին անգամ խոսք լինել չի կարող:

Անդրադառնալով արցախցիների միասնական ուժ ստեղծելուն եւ միասնական ճակատով Սրբազան պայքարին միանալուն՝Վահան Բադասյանը մատնանշեց, որ դա շատ բարդ հարց է: Նա հավատացած է, որ վերջնարդյունքը լավ է լինելու, սակյան ոչ այս իշխանության օրոք:

«Այսօրվա իշխանությունների օրոք ոչինչ չի ստացվի փրկել, քանի որ խաղաղություն մուրացողները միայն պատերազմ ու ցավ են ստանում», - շեշտեց Բադասյանը՝հավելելով, որ այ պահին հայկական կողմն ամեն բան անում է, որ մորթվի:

Բադասյանը նշեց՝հաջորդ քաղաքական ուժն իրեն պետք է զերծ պահի նախկին իշխանավորներից եւ օբյեկտիվ գնահատականներ տա նախկինների գործողություններին, որոնց շարքից զարմանալիորեն դուրս է մնացել Լեւոն Տեր-Պետրոսյանը:

«Ես տեսել եմ դա, սա պարզապես կարծիք չէ: Նա ավելի մեծ ավերածություններ է արել, քան հաջորդ նախագահներն են արել այս երկրի համար: Ավերածությունների հիմքում հզոր սովետական Հայաստանի արդյունաբերական պոտենցիալի ոչնչացումն է, որը սկիզբն է եղել: Լոկ երկու տարում փոշիացրել է ամեն բան եւ հաջորդ նախագահները արդեն այդ հնարավորությունը չեն էլ ունեցել», - ասաց Վահան Բադասյանը:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վարչության նիստ կանի: Օրակարգային հիմնական հարցը լինելու է արդարադատության նախարարի ընտրությունը: Այժմ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք ունեն արդարադատության նախարարի թեկնածուները:

Հիշեցնենք, որ ավելի վաղ հայտնել էինք, որ ՔՊ-ում նախարարի տարբեր թեկնածուների անուններ են քննարկվել՝ Արփի Դավոյան, Արուսյակ Ջուլհակյան, Վլադիմիր Վարդանյան, Հերիքնազ Տիգրանյան, քննարկվել է նաեւ Սիսակ Գաբրիելյանի թեկնածությունը:

Թեկնածուների ցանկը, սակայն, գնալով սեղմվել է, քանի որ մեծ մասը՝ Վլադիմիր Վարդանյանը, Հերիքնազ Տիգրանյանը, Սիսակ Գաբրիելյանը, հրաժարվել են առաջադրվել այդ պաշտոնին:

Արդյունքում, երկու թեկնածուների շուրջ է ընթացել քննարկումը՝ Արուսյակ Ջուլհակյան եւ Արփի Դավոյան, թեեւ վերջինս առհասարակ կապ չունի իրավաբանության եւ արդարադատության հետ:

Այսպիսով, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը 2021 թվականին ձեռք է բերել մեքենա HYUNDAI մակնիշի: Նա անշարժ գույք չի հայտարարագրել: Նրա՝ 2023 թվականի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 71 մլն 479 հազար դրամ: ԱԺ աշխատակազմից Դավոյանը աշխատանքի վարձատրություն է ստացել 9 մլն 995 հազար դրամ:

Դավոյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ է:

Հաջորդ թեկնածուն ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանն է, նա անշարժ գույք եւ ավտոմեքենա չի հայտարարագրել:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 21 մլն 546 հազար դրամ: ԱԺ աշխատակազմից Ջուլհակյանը աշխատանքի վարձատրություն է ստացել 10 մլն 482 հազար դրամ: Ջուլհակյանն ունի նաեւ հիփոթեքով ձեռք բերված բնակարան եւ ավտոկայանատեղի, որի մայր գումարի մնացորդի արժեքը կազմել է 25 մլն 933 հազար դրամ: Արուսյակ Ջուլհակյանը Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամ է:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ԱՅՑԵԼԵԼ Է ԱՌԱՔՆՈՐԴԱՐԱՆ

Արման Թաթոյանն Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի հետ այցելել է Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդարան: Տեղի է ունեցել հանդիպում թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հետ:

Հանդիպմանը քննարկվել են արցախահայերի իրավունքներին վերաբերող հարցեր, անդրադարձ է կատարվել Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության հիմնախնդիրներին:

## ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹ ԵՆ ՎԱՃԱՌՈՒՄ

«Սրբազան պայքար» շարժումը հայտարարություն է տարածել, որում նշվում է.

«Սիրելի՛ հայրենակիցներ, տեղեկացնում ենք, որ մեզ համար անհայտ մարդիկ Սրբազան Պայքարի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի անվամբ կրիպտոարժույթ են ստեղծել եւ զբաղվում են դրա վաճառքով՝ իբր թե ի աջակցության մեր պայքարի:

Հայտնում ենք, որ այդ կրիպտոարժույթի հետ որեւէ առնչություն չունենք, չգիտենք՝ ովքեր եւ ինչ նպատակով են իրականացնում դրա վաճառքը:

Հորդորում ենք զգույշ լինել համացանցում եւ Սրբազան Պայքարի նախաձեռնությունների մասին տեղեկություններ ստանալ բացառապես մեր պաշտոնական էջերից»:

## ԻՐԱՎԱԿԱՆ

ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ

# ՀՐԴԵՀԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՉԻ ՀԱՐՈՒՑՎԵԼ

**«Դոմուս» առեւտրի կենտրոնը հիմնած «Դեկորա գրուպ» ընկերության նկատմամբ 2024 թվականի տարեսկզբին վարույթ է հարուցվել, եւս 2 վարույթ հարուցվել է ընկերության սեփականատեր Արմեն Մուրադյանի առնչությամբ: Մյուս սեփականատեր Արման Ասլանյանի դեմ նախորդ տարի կիրառվել էր վարչական տույժ:**

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2024 թվականին «Դեկորա գրուպ» ընկերությունում տարեկան ստուգումների ծրագրով այս տարվա 4-րդ եռամսյակում նախատեսված էր իրականացնել ստուգում: Սակայն տեսչական մարմինը չհասցրեց անցնել գործի, 4-րդ եռամսյակի մեկնարկին զուգահեռ երեկ հրդեհ բռնկվեց «Դեկորա գրուպ» ընկերությանը պատկանող «Դոմուս» առեւտրի կենտրոնի ամենամեծ պահեստային մասնաճյուղում:

«Դեկորա գրուպ» ՍՊԸ-ից հարուցված վարույթի արդյունքում հօգուտ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի բռնագանձվել է 319 հազար 240 ՀՀ դրամ, որից 310 հազար 39 ՀՀ դրամը՝ որպես պետական պարտքի գումար, 3 հազար ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, 6 հազար 201 ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Արմեն Մուրադյանի դեմ հարուցված 2 վարույթները Երեւանի քաղաքապետարանի կողմից են հարուցված 10 օրվա տարբերությամբ՝ հուլիսի 9-ին եւ 19-ին: Արմեն Մուրադյանից առաջին վարույթի շրջանակում հօգուտ Երեւանի քաղաքապետարանի գանձվել է 100 հազար ՀՀ դրամ, իսկ 2-րդ վարույթով՝ 700 հազար դրամ:

Մյուս սեփականատեր Արման Ասլանյանի նկատմամբ 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կիրառվել էր վարչական տույժ՝ 10 հազար դրամ հօգուտ պետական բյուջեի հաշվի:

«Դեկորա գրուպ» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալը կազմելը է 115 մլն դրամ:

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ «Դոմուս» առեւտրի կենտրոնում հրդեհի վերաբերյալ վարույթ չի հարուցվել:

«Այս պահի դրությամբ մենք հաղորդում չենք ստացել հրդեհ դիտավորությամբ առաջացնելու կամ, այսպես ասած, հրկիզման վերաբերյալ: Նաեւ որեւէ տեղեկություն իրավասու մարմիններից կամ անհատ քաղաքացիներից չենք ստացել տուժածների, վնասվածք ստացածների կամ զոհերի վերաբերյալ, որոնք պարտադիր պայման են տվյալ դեպքում՝ վարույթ նախաձեռնելու համար: Հետեւաբար, այս պահի դրությամբ քրեական վարույթ չկա նախաձեռնված. որ պահին կունենանք նման տվյալներ՝ կստանանք դրանք փրկարար ծառայությունից կամ ոստիկանությունից, կամ որեւէ այլ սուբյեկտից, այդ դեպքում քրեական վարույթ նախաձեռնելու հարցը կլուծվի», - «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց ՀՀ քննչական կոմիտեի մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2023 թվականին ՀՀ-ում գրանցված հանցագործությունների քանակը՝ ըստ հանցատեսակների:

Այսպիսով, 2023 թվականին գրանցվել է ընդհանուր 40.666 հանցագործություն, որից ոչ մեծ ծանրության է 18.905-ը, միջին ծանրության՝ 13.913-ը, ծանր՝ 6.169-ը, առանձնապես ծանր՝ 1.679-ը:

Հանցագործությունների ընդհանուր քանակից կատարվել է հրազենի, ռազմամթերքի գործադրմամբ 94 դեպք:

Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2022 թվականին ընդհանուր հանցագործությունների թիվը կազմել է 37.612 դեպք, ինչը փաստում է, որ 2023 թվականին հանցագործությունների թիվն աճել է 3.054-ով:

2023 թվականի տվյալների համաձայն՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը կազմել է 7.138 դեպք, այդ թվում՝ 1.187 սպանություն, որից առանց հանկարծամահերի գրանցվել է 55 դեպք:

Սպանության փորձ տեղի է ունեցել 65 անգամ, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման՝ 19, իսկ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու՝ 1.062 դեպք, որից 240-ը՝ ծանր:

Սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը 2023 թվականի կազմել են 176, որից 98-ը՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

## ԵՐԳԻՉ ԱՐԱՄԵԻ ԱԿՈՒՄԲՆ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ ՓԱԿԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 27-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում:

«Արամե մյուզիք հոլ» ակումբից տղամարդ էին տեղափոխել հիվանդանոց:

Ոստիկաններն ակումբում մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով ձերբակալել են Երեւանի բնակիչներ 51-ամյա Դավիթ Մկրտչյանին, 51-ամյա Վահե Եսայանին, 32-ամյա Ալբերտ Արեւշատյանին եւ 48-ամյա Արտաշես Աբրահամյանին:

Ա. Արեւշատյանը Ռուսաստանի Դաշնությունում ՀՀ դեսպանությանը կից ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչ Էդգար Արեւշատյանի որդին է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նշված միջադեպի գործով հայտնի, ՌԴ-ում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչ Էդգար Արեւշատյանի որդին է ձերբակալվել, ապա ազատ է արձակվել:

Ազատ արձակվելուց հետո՝ քննչական կոմիտեում վարույթ է նախաձեռնվել խուլիգանության, ծեծի հատկանիշներով, եւ մինչ օրս որեւէ անձի նկատմամբ քրեական հետապնդում չկա:

«Ժողովուրդ» օրաթերթ լրատվականը դեպքի վայրում էր՝ հասկանալու, թե ինչ է կատարվում «Արամե մյուզիք հոլ»-ում, սակայն դեպքի վայրում ArmLur.am-ը պարզեց, որ հայտնի երգչի ակումբը միջադեպից հետո իրավապահները կապարակնքել են, ու, ինչպես տարածքում գտնվող անձինք էին ասում, դեպքը բավականին լուրջ է եղել ու դրանից հետո ակումբը փակել են:

Ըստ ականատեսների՝ երգիչը հաճախ է գալիս ակումբ, սակայն դեպքից հետո չեն տեսել երգչին: Փաստ է մեկ բան՝ հայտնի երգչի ակումբից դանակահարված քաղաքացու են տարել հիվանդանոց, իսկ մինչ օրս որեւէ անձի մեղադրանք առաջադրված չէ: Ուստի հարց է առաջանում՝ ո՞ւմ են փորձում փրկել իրավապահները՝ հայտնի պաշտոնյայի որդո՞ւն, թե՞ երգիչ Արամեին:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՉ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԲՌՆԱԳԱՆՁԵԼ

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Աղվան Հովսեփյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

29 անշարժ գույք.

2 միլիարդ 551 մլն 100 հազար դրամ:

## ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԱՆՏՈՒՄ

Երեկ՝ առավոտյան, իրավապահները մտել են Արմավիրի բանտ ու «օրենքով գողերին» ու «զոն նայողներին» Արմավիրի բանտից տարել են ԱԱԾ մեկուսարան:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց քրեակատարողական ծառայություն, որտեղից քրեակատարողական ծառայության մամլո խոսնակ Նոնա Նավիկյանը ասաց, որ քրեական ենթամշակույթի առանձին դրսեւորումների նախականխման ուղղությամբ քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ:

Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ կալանավորված անձանց եւ դատապարտյալների տեղափոխումը մի քրեակատարողական հիմնարկից մեկ այլ քրեակատարողական հիմնարկ համակարգի առօրյա գործունեության տեսակներից է:

## ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 3-ին ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն էր զանգահարել Երեւանի բնակիչ 29-ամյա մի երիտասարդ եւ հայտնել, որ գումար է փոխանցել հոր բանկային հաշվին, սակայն անհայտ հանգամանքներում այն պարբերաբար ելքագրվել է:

Ոստիկանության Թումանյանի բաժնի ծառայողները ստուգումների ընթացքում պարզել են, որ հոկտեմբերի 3-ի գիշերը՝ ժամը 1:49-ի սահմաններում, անհայտ անձը Մեծ Այրում բնակավայրի բնակիչ 56-ամյա տղամարդու քարտից հափշտակել է ողջ գումարը:

Թումանյանի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գումարը քարտից հափշտակել է հարեւանը, եւ մասմաս փոխանցել իր բուքմեյքերային խաղային հաշվին:

Երեւանի բնակիչ 33-ամյա երիտասարդը բացատրական աշխատանքի արդյունքում հոկտեմբերի 7-ին ներկայացել է ոստիկանություն եւ խոստովանել արարքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 7-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 102 դեպք՝ որից 5-ը նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

## ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԱՊԱՑՈՒՑԵԼՈՒ Է ԻՐ ԱՆՄԵՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 7-ին Երեւան քաղաքում, հակակոռուպցիոն դատարանում կայացան Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր բնակավայրի նախկին վարչական ղեկավար, ներկայումս Բերդի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Կամո Չոբանյանի գործով նախնական դատալսումներ: Հակակոռուպցիոն կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ նշված է. «նախաքննությամբ պարզվել է, որ Կ. Չ.-ն 2024 թվականի փետրվարին համայնքապետարան է ներկայացրել իր ստորագրությամբ վավերացված՝ Տավուշի մարզի բնակավայրերից մեկի 20-51 տարեկան բնակիչներ հանդիսացող ՀՀ զինապարտ քաղաքացիների անվանացուցակ, որի մեջ եղել են նաեւ իր որդու տվյալները: Կ. Չ.-ն, սակայն, մտադրված լինելով ազատել որդուն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվող 25-օրյա վարժական հավաքներից, կեղծ նշում է կատարել վերջինիս՝ Ռուսաստանի Դաշնությունում գտնվելու մասին այն դեպքում, երբ որդին այդ պահին գտնվել է Հայաստանի Հանրապետությունում: Այնուհետեւ ակնհայտ կեղծ տեղեկատվություն պարունակող փաստաթուղթը Կ. Չ.-ն ուղարկել է համայնքապետարան, որից հետո այն դրվել է պաշտոնական շրջանառության մեջ: Վերը նշված հանցավոր արարքի համար Կ. Չ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով»: Հակակոռուպցիոն դատարանում նախնական դատալսումներում նախագահում է դատավոր Վահե Դոլմազյանը, մեղադրանքը պաշտպանում է ավագ դատախազ Աննա Հակոբյանը: Կամո Չոբանյանի շահերը պաշտպանում է փաստաբան Արթուր Մելիքբեկյանը: Կամո Չոբանյանն առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչում, դատարանում նրա պաշտպանը չընդունեց մեղադրող կողմի հետ համաձայնության գալու, համագործակցության, արագացված դատաքննության վերաբերյալ դատավորի առաջարկը: Նախնական դատալսումների ժամանակ որոշվեց ապացույցների դատաքննության կարգը՝սկզբից հետազոտել քրեական գործով ապացույցները, հարցաքննել գործով 2 վկաներին, ապա Կամո Չոբանյանին: Դատական հաջորդ նիստը նշանակվեց նոյեմբերի 25-ին: Կամո Չոբանյանի դեմ նախկինում այլ գործերով շինծու քրեական մեղադրանքներ էին ներկայացվել, որոնք քննության ընթացքում հերքվել, քրեական գործերը փակվել են: Այս քրեական գործն առնչվում է Կամո Չոբանյանի որդի Մանվելին, ով Արցախում տեղի ունեցած պատերազմին մասնակցել է, վիրավորվել. նա վարժական հավաքներից խուսափելու մտադրություն երբեւէ չի ունեցել եւ չունի: Կամո Չոբանյանը պնդում է, որ ինքն էլ այդ առնչությամբ կեղծ նշում չի կատարել:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

# Android ՍԱՐՔԵՐԻ ՎՐԱ ԳՐՈՀՆԵՐԸ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ

**«Կասպերսկի» ընկերությունը 2024-ի երկրորդ եռամսյակում ամբողջ աշխարհում կանխել է Android-ի համար վնասաբեր, գովազդային կամ անցանկալի մոբայլ ծրագրերի օգտագործմամբ 7 697 975 գրոհ այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կանխվել է 5 704 599 նման գրոհ:**

«Կասպերսկի» ընկերության փորձագետները տեղեկացնում են, որ, չնայած ընթացիկ տարվա ապրիլ-հունիսին այդ գրոհների թվի աճին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանց քանակը ընթացիկ տարվա առաջին եռամսյակի (10 100 510) համեմատ նվազել է: Այդ մոբայլ վնասաբեր ծրագրերի ակտիվության գագաթնակետը գրանցվել է 2023-ի չորրորդ եռամսյակում, երբ հետ է մղվել 10 705 625 գրոհ: Նվազումը պայմանավորված է գովազդային հավելվածների, առաջին հերթին՝ AdWare.AndroidOS.HiddenAd ընտանիքի՝ գովազդներ բացող բազմազան թաքնված ԾԱ-ի ակտիվության կտրուկ անկմամբ:

Ընկերության տվյալներով՝ ընթացիկ տարվա ապրիլ-հունիսին մոբայլ սարքերի համար ամենատարածված սպառնալիքը դարձել են RiskTool դասի ծրագրերը (պոտենցիալ անցանկալի ԾԱ)՝ հայտնաբերված սպառնալիքների ընդհանուր թվի 41%-ը: Հայտնաբերվել է ավելի քան 367 418 տեղադրման վնասաբեր փաթեթ, որոնցից 13 013 փաթեթը եղել են մոբայլ բանկային տրոյացիներ, իսկ 1 392 փաթեթը՝ մոբայլ շորթող տրոյացիներ: Իսկ 2023-ի նույն ամիսներին RiskTool-ի մասնաբաժինը կազմել է հայտնաբերված բոլոր սպառնալիքների 30,8%-ը, հայտնաբերվել է 370 327 տեղադրման վնասաբեր փաթեթ, որոնցից 59 167-ը եղել են մոբայլ բանկային տրոյացիներ, 1 318 փաթեթը՝ մոբայլ շորթող տրոյացիներ:

Ընդ որում՝ բանկային տրոյացիների նոր ունիկալ տեղադրման փաթեթների քանակը շարունակում է գրեթե նույն մակարդակի վրա լինել արդեն երրորդ եռամսյակն անընդմեջ եւ ապրիլ-հունիսին կազմել է 13 013:

Շորթիչների տեղադրման փաթեթների թիվը նվազել է 2024-ի առաջին եռամսյակի համեմատ (1 990), իսկ երկրորդում եղել է մոտավորապես նույն մակարդակի վրա (1 392), ինչ մեկ տարի առաջ (1 318): Դրանք ամենաշատն են եղել նույնպես 2023-ի չորրորդ եռամսյակում՝ 6 125 փաթեթ:

**«Կասպերսկի» ընկերության մասին**

«Կասպերսկի»-ն միջազգային ընկերություն է, որը 1997-ից աշխատում է տեղեկատվական անվտանգության եւ թվային գաղտնիության ոլորտում: Այսօրվա դրությամբ ընկերությունը պաշտպանել է ավելի քան 1 միլիարդ սարք զանգվածային կիբեռսպառնալիքներից եւ թիրախային գրոհներից, եւ նրա կուտակած գիտելիքներն ու փորձը հետեւողականորեն փոխակերպվում են նորարարական լուծումների եւ ծառայությունների՝ ամբողջ աշխարհում բիզնեսի, կրիտիկական կարեւոր ենթակառուցվածքների, պետական մարմինների եւ շարքային օգտատերերի պաշտպանության համար: «Կասպերսկի» ընկերության ընդարձակ պորտֆոլիոն ներառում է վերջնական սարքերի պաշտպանության առաջադեմ տեխնոլոգիաներ, մի շարք մասնագիտացված պրոդուկտներ եւ ծառայություններ, ինչպես նաեւ կիբեռհիմունային լուծումներ՝ բարդ եւ անընդհատ զարգացող կիբեռսպառնալիքների դեմ պայքարելու համար:

Մենք օգնում ենք ամբողջ աշխարհում 200 հազար կորպորատիվ հաճախորդների պաշտպանել իրենց համար ամենաարժեքավորը:

*«Կասպերսկի» ընկերության*
*Հայաստանի ներկայացուցչություն*

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՆՑԱԿԵՑԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՉԻ ՍՊԱՍԱՐԿՎՈՒՄ

Վերին Լարսի անցակետը ժամանակավորապես փակվել է. համացանցի հետ կապված խնդիրներ են առաջացել:

Վրաց-ռուսական սահմանին վնասվել է ինտերնետ մալուխը, ինչի պատճառով էլ անհնար է դարձել մաքսային ընթացակարգերի իրականացումը:

Տեխնիկական աշխատանքներ են տարվում՝ մալուխը եւ ինտերնետային կապը վերականգնելու ուղղությամբ:

## «ԴՈՄՈՒՍՈՒՄ» ՀՐԴԵՀԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 12:57-ին, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Իսակովի պողոտայում գտնվող «Դոմուս» խանութ-սրահի պահեստային տարածքում:

Հրդեհի «ԲԻՍ 1» բարդության աստիճանով դեպքի վայր են մեկնել Երեւան քաղաքի փրկարարական վարչությունից 4 մարտական հաշվարկ:

Ժամը 13:06-ին հայտարարվել է հրդեհի բարդության «Թիվ 2» կանչ:

Դեպքի վայր է մեկնել եւս 2 մարտական հաշվարկ, 2 ավտոսանդուղք, ՃԿԱԿ օպերատիվ խումբը, ԵՓՎ հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման խումբը, ԲԱՎ հերթապահ խումբը, ՓՈՒՎ հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման խումբը եւ հերթապահ հոգեբանը:

Ժամը 13:20-ին հայտարարվել է հրդեհի բարդության «Թիվ 3» կանչ. դեպքի վայր են մեկնել եւս 4 մարտական հաշվարկ եւ 1 ԲԱՎ խումբ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 15:23-ին, մարվել՝ ժամը 16:11-ին: Նախնական տվյալներով՝ մոտ 3000 քառ.մ տարածքում այրվել է երկհարկանի շինությունն ամբողջությամբ՝ ներսում գույք, տեխնիկա, սարքավորումներ, կահույք եւ այլն:

Հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվել են 17 մարտական հաշվարկ, 6 օպերատիվ խումբ, 2 ավտոսանդուղք, Երեւանի քաղաքապետարանի 9 ջրատար:

Դեպքի վայրում աշխատանքները ղեկավարել է ՆԳՆ ՓԾ տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Կամո Ցուցուլյանը:

## ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԻՋԵԼ Է

Սեւանա լճի մակարդակը սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում իջել է 1 սմ-ով եւ կազմել 1900.51մ (06.10.24թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 22 սմ-ով, իսկ 2024 թվականի հունվարի 1-ի մակարդակից՝ 34 սմ-ով:

Արփա-Սեւան ջրատարով սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 0.602 մլն. մա, իսկ 2024 թվականի հունվարի 1-ից հոկտեմբերի 6-ը ներառյալ՝ 179.382 մլն. մա:

2024 թվականին Սեւանա լճից ոռոգման նպատակով ջրառը սկսվել է իրականացվել հունիսի 16-ից եւ շարունակվել մինչեւ սեպտեմբերի 16-ը ներառյալ ու համաձայն Հրազդան ՀԷԿ-ի ջրանցքի Գեղամավան դիտակետի տվյալների՝ այդ ժամանակահատվածում լճից բացթողնված ջրի գումարային ծավալը կազմել է 131.038 մլն.մ ա:

*● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 12 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Ռուզաննա Աշոտի Հարությունյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Կ. Տիմիրյազեւ-ի փողոց, 34 հասցեում գտնվող 304,7 քմ բնակելի տուն, 19,4 քմ ավտոտնակ, 14,5 քմ օժանդակ շինություն եւ 0,06335 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 70500000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 25.10.2024թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am , www.borsa.am կայքերը:

Converse Mobile

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**Նոր վերազինումից հետո «Converse Mobile» հավելվածում հասանելի են նոր հնարավորություններ: Հավելվածի զարգացման բաղադրիչների շրջանակում՝ նպատակ ունենալով հաճախորդներին տրամադրել ֆինանսական լավագույն փորձառություն, եւ հաշվի առնելով թվայնացման ժամանակակից միտումները՝ Converse Mobile-ի գործիքակազմը հարստացել է եւս մի քանիսով:**

Մի քիչ համաշխարհային վիճակագրություն

Statista-ի տվյալներով՝ 2023 թվականին աշխարհում մոբայլ բանկինգից օգտվողների թիվը հատել է 2.5 միլիարդը, իսկ նույն թվականին Marqueta- ի կողմից երեք մայրցամաքում կատարված հարցումները վկայում են բանկային բջջային հեռախոսով վճարումների ու գործարքների նկատմամբ վստահության աճի մասին: Հարցված օգտատերերի գրեթե երեք քառորդը (72%) նշել է, որ նախապատվություն է տալիս հեռախոսով վճարումներին եւ որոնում է լավագույն բանկային փորձառությունը: Նրանք նախ եւ առաջ ցանկանում են, որ հավելվածը լինի հարմարավետ՝ պարզ եւ հասանելի՝ 24/7:

Ցանկանում են մոբայլ հավելվածով կատարել վճարումներ, փոխանցել գումար եւ վճարել հաշիվներ:

Ցանկանում են հնարավորություն տեսնելու իրենց հաշվեկշիռը, գործարքների պատմությունը եւ հեշտությամբ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Converse Mobile-ի եւ նոր հնարավորությունների մասին

«Կոնվերս բանկի» «Մոբայլ» հավելվածում գործարկման պահից ի վեր հասանելի է վճարումների, փոխանցումների եւ գործարքների իրականացման լայն գործիքակազմ, որն անընդհատ ընդլայնվում եւ զարգանում է: Ապահովվում է գործարքների իրականացման առավելագույն անվտանգություն:

Հերթական վերազինումից հետո հավելվածի գործիքակազմը կրկին ընդլայնվում է: Նոր գործիքների ներդրման շնորհիվ ավելի հարմարավետ ու պարզ է դառնում օգտատերերի ֆինանսական առօրյան, վերանում է «Կոնվերս բանկ»-ի մասնաճյուղեր այցելելու անհրաժեշտությունը՝ որոշակի տիպի տեղեկություն ստանալու նպատակով, գործարկվում է խնայողությունների նոր հնարավորություն:

Մասնավորապես,

ակտիվացնելով «Money Box խնայողությունները»՝ օգտատերերը կկարողանան «Վճարումներ» բաժնում ներառված գործարքները կատարելիս կլորացնել գումարը, այս սահմանաչափը ուղղել Money Box եւ խնայողություններից ստանալ 5% անվանական դրույքաչափով եկամուտ:

Հաճախորդները կկարողանան ձեւավորել եւ էլ. հասցեին ստանալ քաղվածքներ, այդ թվում՝ քարտային հաշվի:

Պատմություն բաժնում կընդլայնվի որոնման հնարավորությունը: Հնարավոր կլինի որոնել՝նշելով գործարքի տեսակը, կարգավիճակը, գումարի չափը, արժույթը, ինչպես նաեւ կատարել բառային որոնում:

«Հավելվածի նոր գործիքակազմը զգալիորեն կբարելավի հաճախորդների ֆինանսական փորձառությունը՝ մեծացնելով հարմարավետությունն ու արդյունավետությունը»,- ասված է «Կոնվերս բանկի» հրապարակման մեջ:

ՊԵԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

# ՍՈՑՑԱՆՑԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐ

**ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչությունը, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում, բացահայտել է առանց պետական գրանցման, հարկային մարմնում հաշվառման եւ համապատասխան լիցենզիայի՝ սոցիալական ցանցերի միջոցով դեղամիջոցների իրացման դեպք:**

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչություն օպերատիվ եղանակներով տեղեկություն էր ստացվել, որ ինստագրամյան pharm_Online-24 էջի միջոցով գովազդվում եւ իրացվում են դեղանման ապրանքատեսակներ: Ձեռնարկված միջոցառումների շրջանակում, վարչության ոլորտային թիվ 7 բաժնի օպերատիվ աշխատակիցները, տվյալ ինստագրամյան էջում նամակագրության, այնուհետեւ հեռախոսազանգի միջոցով կապ են հաստատել էջի օգտատիրոջ հետ՝ «OZEMPIC 0.5 mg» անվանումով դեղամիջոց գնելու նպատակով: Հեռախոսազանգի միջոցով պատվիրվել է 6 հատ «OZEMPIC 0.5 mg» դեղամիջոց: Վաճառողի տրամադրած բանկային քարտի հաշվեհամարին սկզբում կատարվել է 100.000 դրամ կանխավճար՝ 2 տուփի համար: Այս դեղամիջոցի տուփի մեջ առկա է 3 սրվակ, որոնցից յուրաքանչյուրի արժեքը 100.000 դրամ է:

Իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ դեղամիջոցն իրացնողը քաղաքացի Հ.Ջ-ն է, ով չունի պետական գրանցում եւ հաշվառված չէ հարկային մարմնում:

Դեղամիջոցների իրացման մեկ այլ դեպքով էլ պարզվել է, որ քաղաքացի ՎԳ-ն, 2024 թվականի ապրիլ ամսից սկսած, առանց պետական գրանցման եւ հարկային մարմնում հաշվառման, իր անձնական ավտոմեքենայով իրականացնում է դեղամիջոցների վաճառք: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում, քաղաքացու անձնական ավտոմեքենայում հայտնաբերվել է 64 տուփ տարբեր տեսակի դեղամիջոց:

Հայտնաբերված դեղամիջոցները քաղաքացին տրամադրել է հետագա հետազոտման համար: Նշված գործունեության արդյունքում վերջինս ստացել է խոշոր չափերի ձեռնարկատիրական եկամուտ:

Լիցենզավորման ենթակա ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հատկանիշներով կազմված արձանագրություններն ուղարկվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն՝ վարչական վարույթներ իրականացնելու համար:

Պետական եկամուտների կոմիտեն ՀՀ քաղաքացիներին հորդորում է զերծ մնալ սոցիալական ցանցերի միջոցով կասկածելի ծագում ունեցող, առողջության համար հնարավոր վտանգ ներկայացնող դեղեր եւ դեղամիջոցներ ձեռք բերելուց:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԳԻՐՔ-ԿՈՉ...

# ԿԱՅԱՑԵԼ Է «ՌՈՒԲԵՆԸ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

**Երեկ՝ երեկոյան, Երեւանում կայացավ Ռուբեն Վարդանյանին նվիրված գրքի հայերեն տարբերակի շնորհանդեսը: Այն գիրք-կոչ է՝ հանուն արդարության եւ Ռուբեն Վարդանյան մարդու ազատության:**



Գրքում հեղինակներ Վլադիսլավ Գասումյանովը եւ Ալինա Գասումյանովան ցանկացել են ցույց տալ ոչ թե այն, թե ինչ գործեր է արել Ռուբեն Վարդանյանը, այլ այն, թե ինչու է արել այդ ամենը:

Շնորհանդեսի ընթացքում գրքի թարգմանիչ Նարինե Կռոյանը նշեց, որ գրքի թարգմանչական ընթացքն իրեն մեծ բավականություն է պատճառել:

Խոսելով գրքի թարգմանչական աշխատանքի մասին՝ նա նշեց, որ սկզբում հպարտություն է զգացել՝ թարգմանելով գիրք մի մարդու մասին, ով «աշխարհի որդին է, մարդ, ով երբեք չի նահանջել»:

«Կարծում եմ՝ նա Արցախ գնաց, քանի որ իր առաքելությունն էր համարում լինել այնտեղ, որտեղ իր կարիքն ունեն», - ասաց թարգմանիչը եւ հավելեց. «Գրքի վերջում հասկացա, որ նա մեզ մեկ խորհուրդ է տալիս: Այն է՝ գալու է մի օր, երբ յուրաքանչյուրս սկսելու է հավաքել քարեր՝ կառուցելուու մեր աշխարհը»:

Նշենք, որ գրքի բնօրինակը ռուսերեն է, եւ շնորհանդեսը տեղի է ունեցել մի քանի ամիս առաջ Մոսկվայում:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## ԱԶՆԱՎՈՒՐԸ՝ ՌՈԺԵ ԿԱՍՊԱՐՅԱՆԻ ԱՉՔԵՐՈՎ

Ֆրանսիայում անցկացվող Ֆրանկոֆոնիայի 19-րդ գագաթնաժողովի շրջանակում կազմակերպված Ֆրանկոֆոնիայի ավանում կայացավ հայազգի անվանի լուսանկարիչ Ռոժե Կասպարյանի լուսանկարների ցուցադրությունը՝նվիրված Շառլ Ազնավուրին՝ «Ազնավուրը՝ Ռոժե Կասպարյանի աչքերով» խորագրով:

Ռոժե Կասպարյանը ֆրանսիական հասարակության լայն շրջանակներում հայտնի է դարձել հատկապես 60-ական թվականների ինչպես ֆրանսիացի, այնպես էլ անգլոսաքսոն աշխարհահռչակ աստղերի իր լուսանկարներով, որոնց համար արժանացել է «60-ական թվականների լավագույն հայացք» տիտղոսին: Նրա օբյեկտիվում հավերժացել են Բիթլզը, Ռոլինգ Սթոունզը, Էդիթ Պիաֆը, Ժակ Բրելը, Սերժ Գենսբուրգը, Ջոնի Հոլիդեյը, Սիլվի Վարդանը եւ այլք:

Շառլ Ազնավուրին նվիրած մի քանի տասնյակ լուսանկարներներ ներառող տպավորիչ շարքը հանդիսանում է աշխարհահռչակ արտիստի կյանքի յուրօրինակ հետագիծ՝ նրա հարուստ եւ երկարամյա ստեղծագործական ուղու՝ հավերժացված բազում հուզիչ եւ խորհրդանշական պահերով:

Ցուցադրության կապակցությամբ ավանում անցկացվեց քննարկում, որի ժամանակ խոսքով հանդես եկան Ֆրանսիայում ՀՀ դեսպան Հասմիկ Տոլմաջյանը եւ Ռոժե Կասպարյանի դուստրը՝ լուսանկարիչ Լիդիա Կասպարյանը: Քննարկմանը ներկա էր նաեւ ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար Դանիել Դանիելյանը:

Իր խոսքում դեսպան Տոլմաջյանը խորհրդանշական համարեց Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ ֆրանսահայ մեծանուն արտիստին նվիրված ցուցադրության անցկացումը Ֆրանկոֆոնիայի ավանի շրջանակներում՝ ընդգծելով նրա մեծ հռչակը ֆրանկոֆոն աշխարհում, «ֆրանսերեն լեզվի դեսպան» պատվավոր տիտղոսին արժանանալը՝ ֆրանսերեն լեզվի տարածմանը բերած իր մեծ նպաստի համար, ինչպես նաեւ այն բացառիկ դերակատարությունը, որ իրեն միաժամանակ՝ 100 տոկոս հայ եւ 100 ֆրանսիացի համարող աշխարհահռչակ երգիչն ունեցել է հայ-ֆրանսիական բարեկամության ամրապնդման գործում:

Դեսպանը բարձր գնահատեց նաեւ ֆրանսահայ անվանի լուսանկարիչ Ռոժե Կասպարյանի հարուստ եւ ինքնատիպ լուսանկարչական ժառանգությունը, որը հատկապես վերջին տարիներին, համալրվել է Հայաստանին, հայկական բնաշխարհին եւ պատմամշակութային ժառանգությանը նվիրված հարուստ լուսանկարչական անդրադարձերով:

Ցուցադրությանը զուգահեռ Ֆրանկոֆոնիայի ավանի հայկական տաղավարում ներկայացվեց նաեւ Հայաստանի մշակութային ժառանգությունը՝ եռաչափ սկանավորման միջոցով: Հպման էկրաններով եւ վիրտուալ իրականության սաղավարտներով «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը հնարավորություն ընձեռեց ավանի այցելուներին նորագույն տեխնոլոգիաների միջոցով տեսնելու եւ ճանաչելու Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը:

Ֆրանկոֆոնիայի ավանի շրջանակներում ելույթով հանդես եկավ նաեւ ֆրանսահայ «Երազ» համույթը՝ներկայացնելով հատվածներ Շառլ Ազնավուրին եւ Հայաստանին նվիրված պարային ներկայացումներից:

## ՊԼԱՍԻԴՈ ԴՈՄԻՆԳՈՅԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հյուրընկալել է օպերային արվեստի լեգենդ, մեր ժամանակների աշխարհահռչակ տենոր Պլասիդո Դոմինգոյին: Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից:

Ճանաչված արտիստը հոկտեմբերի 8-ին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ հանդես է գալու համերգով:

Քաղաքապետ Տիգրան Ավինյանը շնորհակալություն է հայտնել նշանավոր արտիստին՝ ընձեռած բացառիկ հնարավորության համար:

Համաշխարհային երաժշտարվեստի, ինչպես նաեւ Երեւան քաղաքի մշակութային կյանքի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար Տիգրան Ավինյանը երաժշտարվեստի աշխարհահռչակ գործչին պարգեւատրել է Երեւանի քաղաքապետի ոսկե մեդալով:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՈՎՔԵՐ ԵՆ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

«Ծաղկաձոր օփեն 2024» մրցաշարը դարձավ աշնան ամենահիշվող շախմատային իրադարձություններից մեկը: Հայտնի լեռնադահուկային հանգստավայրում հավաքվել էին ավելի քան երկու հարյուր շախմատիստներ, հայտնում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Մրցաշարը անցկացվեց 2 վարկանիշային խմբերով: Ներկայացնում ենք բոլոր մրցանակակիրներին:

«Ա» խումբ՝ հիմնական մրցանակներ.
1-ին՝ ՄԳ Կարթիկ Վենկատարաման
2-րդ՝ ՄԳ Իգոր Լիսի
3-րդ՝ ՖՎ Էրիկ Հակոբյան
4-րդ՝ ՄԳ Ալեքսեյ Գոգանով
5-րդ՝ ՄԳ Սերգեյ Լոբանով
6-րդ՝ ՄԳ Ջավեն Անդրիասյան
7-րդ՝ ՄՎ Արթուր Դավթյան
8-րդ՝ ՖՎ Ալեքս Սահակյան

«Ա» խումբ՝ հատուկ մրցանակներ.
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 2400 միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստ՝ ՖՎ Էրիկ Գասպարյան
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 2300 միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստ՝ ՖՎ Հայկ Երիցյան
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 2200 միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստ՝ Կոնստանտին Կորնիեենկո
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 18 տարեկան շախմատիստ՝ ՄՎ Ռոբերտ Փիլիպոսյան
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 16 տարեկան շախմատիստ՝ ՄՎ Լեւ Զվերեւ
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 14 տարեկան շախմատիստ՝ ՎԹ Սերգեյ Սկլոկին
Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի՝ ԿՖՎ Աննա Խաչատրյան
Երկրորդ արդյունք ցույց տված շախմատիստուհի՝ ԿՄՎ Սուսաննա Գաբոյան
Լավագույն արդյունք ցույց տված օտարերկյա մասնակից՝ ՄՎ Արտյոմ Պինգին
Լավագույն արդյունք ցույց տված ակադեմիայի սան՝ ՖՎ Վահե Սուքիասյան

«Բ» խումբ՝ հիմնական մրցանակներ.
1-ին՝ Ռաուֆ Կասիմով
2-րդ՝ Իվան Կուզմին
3-րդ՝ Արամ Կասպարով
4-րդ՝ Արթուր Մարկոսյան
5-րդ՝ Դավիթ Ստեփանյան
6-րդ՝ Մամիկոնյան Արտյոմ
7-րդ՝ Համայակ Ստեփանյան
«Բ» խումբ՝ հատուկ մրցանակներ.
Լավագույն արդյունք ցույց տված վետերան շախմատիստ՝ Անդրանիկ Աբրահամյան
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 14 տարեկան շախմատիստ՝ Ալբերտ Աղազարյան
Լավագույն արդյունք ցույց տված մինչեւ 12 տարեկան շախմատիստ՝ Թեմուր Շավկատով
Լավագույն արդյունք ցույց տված շախմատիստուհի՝ Սեդա Բաղալյան:

● *Հոկտեմբերի 12-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:**
*Աննա Ստեփանյան (26 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

*ՀՀ ԿԳՄՍ նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ վկայականը կորցնելուց հետո տրամադրվու՞մ է արդյոք դրա կրկնօրինակը:**
*Ասատուր Ստեփանյան (29 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

*ՀՀ կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ընդ որում՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

ՖԻԴԵ-ն 17-ամյա շախմատիստ Ռոբերտ Փիլիպոսյանին շնորհել է միջազգային վարպետի կոչում:

Այս մասին հայտնում է Հայաստանի շախմատային ֆեդերացիան:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 3 + 7<br>+15 + 20 |
| Կոտայքի լեռներ | + 4 + 7<br>+14 + 19 |
| Կոտայքի նախալեռներ | +11 + 13<br>+17 + 20 |
| Գեղարքունիք | + 4 + 8<br>+14 + 17 |
| Լոռի | + 6 + 10<br>+16 + 19 |
| Տավուշ | + 8 + 13<br>+17 + 20 |
| Արագածոտնի լեռներ | + 4 + 7<br>+14 + 17 |
| Արագածոտնի նախալեռներ | + 10+ 14<br>+18 + 20 |

| | |
|---|---|
| Արարատ | + 13 + 15<br>+19 + 22 |
| Արմավիր | + 12 + 14<br>+19 + 22 |
| Վայոց ձորի լեռներ | + 6 + 8<br>+15 + 19 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 13 + 15<br>+19 + 22 |
| Սյունիքի հովիտներ | + 16 + 18<br>+20 + 22 |
| Սյունիքի նախալեռներ | + 8 + 11<br>+16 + 18 |
| ԼՂՀ | + 8 + 10<br>+15 + 18 |
| Երեւան | +11 + 14<br>+ 15 + 19 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.10.2024**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*